



Մ Ա Ս Ե Ա Յ Ա Ղ Ա Ի Ն Ի

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ԱԶԳԱՅԻՆՔ, ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԿԱՐՄԻՔ ՄԸ



Մզգային յառաջագիմութեան վրայ տաք տաք խօսակցութիւններ ընող մարդկանց մէջ շատ անգամ այնպիսի խօսքեր կ'ըսուին, առաւելապէս մեր օրերը, որ կարծէ գիր անցընել, ոչ միայն իրեն հետաքրքրական տեղեկութիւններ, հապա նաեւ իբրեւ խելք սովորելու երեւոյթներ: Մեր մեր լրածներէն մէկը արժան դատեցանք այս տեղ համառօտել.

«Այժմ մեր ազգին աչքը շատ բացուած է, մանաւանդ այս ինչ տեղը, այն ինչ քաղաքը, այն ինչ մայրաքաղաքը» կըսէր յիսուն տարեկան վաճառականին մէկը, որ Տաճկաստանի եւ Ռուսաստանի քանի մը կողմերը

երթեւեկութիւն ընելու սովորութիւն ունէր:

— Ի՞նչ կողմանէ, — պարոն» ըսաւ անոր աշխարհապետ ու ազգին օգտին վրայ մտածող ծերունի մը:

— Այս կողմանէ որ դրեթէ ամէն տուն, ամէն տեղ, ամէն խանութ, ամէն թանգարան, ամէն սրճարան, ամէն թէատրոն, եւ մինչեւ եկեղեցիներու մէջ անգամ... ազգային խնդիրներու վրայ խօսակցութիւններ ու վիճարանութիւններ կ'լինին, եւ լրագիրներու մէջ զուարճալի հակաճառութիւններ կ'գրուին:

— Ի՞նչ են արդեօք այդ ազգային ըսուած խնդիրները:

— Ի՞նչ պիտի լինին. — գարատուններ բանալու վրայ, ընկերութիւններ կազմելու վրայ, ստակ հաւաքելու վրայ, ասգիս անգին հաւաքուած ազգային ստակները ձեռք ձգելու վրայ, ընկերական ստակներուն հաշիւները իրարմէ պահանջելու վրայ, իրարու պահառութիւնները դուրս հանելու վրայ, ազգային սահմանադրութիւն շինելու վրայ, սահմանադրութեան ամէն մէկ յօդուածներուն վրայ, ազգային դաւանանքի վրայ, հայութեան՝ փրօթէսթանութեան վրայ, ո՞ր մէկն ըսեմ. . .

— Ասանք ամէնն ալ բարի. բայց ես մէկ բան մը հարցնեմ. արդեօք այդ ազգային խնդրոց վրայ խօսողները ինչպէս որ պէտք է կհասկընան իրենց խօսքերն ու գիմացիւններուն տուած պատասխանները :

— Իհարկէ կհասկընան որ կխօսին. թէ պէտ չհասկըցողներն ալ շատ են, ինչպէս՝ շիտակն ըսեմ՝ մէկն ալ ես :

— Ես կարծեմ թէ դժբաղդարար խիստ շատ աւելի են չհասկըցողները քան թէ հասկըցողները :

— Իրաւ է. եւ այն պիտի լինի անշուշտ պատճառն որ այդ ամենայն խնդիրներուն վրայ շատ առնէ է որ կխօսուի, եւ սակայն դժուարութիւնները լուծուելու տեղ՝ օրէ օր կաւելնան ու աւելի կպրօծնակին, կախանքը կշաւանան, վէճերը կստատկանան, ձայներն ու ձեռքերը իրարու դէմ՝ կբարձրանան, աւտելութիւնները կաճին, երկպառակութիւնները կքաղմանան, նոր նոր կուսակցութիւններ կձեւանան, շատ պատուաւոր ու խոհեմ մարդիկ ազգային գործերէ ետ կքաշուին, շատ տաքդուխ ու անխոհեմ անձինք հրապարակ կնետուին, եւ շատ թերուստմն շաղակրատներ, — որք այրն որ տեսնեն՝ բնորդատաստանի կքաշեն, — անխմաստ եւ անոճ գրուածքներով իրենց խելքին փչածը կմըրեն կծրեն ու տղազրութեամբ կտարածեն :

— Ճշմարիտ է, բայց շնորհ ալ գիտէք ինչ կըսեն. «Այդ բաներով է որ ազգը առաջ կերթայ» կըսեն :

— Վախեմ թէ այդ ըսողները շատ սխալին ու խարբին : Պէտք էր ըսէին թէ ատանցմով ազգը ետեւ ետեւ կերթայ ու գետին կկործանի : Վասն զի ո՛չ ապաքէն այն ժամանակն որ կանցընեն նոքա բնգունայն վիճաբանութիւններու իրարու դէմ, կրնային անցընել ազգին ճշմարիտ օգուտները մտածելու միա-

բանութեամբ, եւ անոնց համար աշխատելու, այն ստակներն որ կվառնեն՝ մէկդմէկ իշխանութենէ ձգելու, եւ մէկդմէկ կործանելու, կրնային բանեցընել՝ ազգին բարոյական վիճակին աւերակները կանգնելու եւ զանազան ուսումնական եւ բարեգործական տեղեր եւ ընկերութիւններ հաստատելու եւ բարեկարգ կերպով առաջ տանելու. այն տղազրութիւնները՝ որովք պուտախօս յայտարարութիւններ ու հակասական բողոքներ կտարածեն ժողովրդեան մէջ մէկուն մէկաւրէն դէմ, կըրնային բանեցընել՝ ազգին մէջ հաղարաւոր օգտակար գիտելիքներ փռելու :

— Իրաւունք ունիս, պարսն : Ես ալ այն ազգատէրներէն մէկուն անցեալները ատոր նման բան մը կըսէի. բայց որո՞ւ կըսես, իսկայն բերանս փակեց ըսելով թէ «Ձեն չունի, զեն չունի. յեփիշակյանն փեփշակ» : Ես ալ «Դուք գիտէք» ըսի ու ձայնս քաշեցի :

— Շատ լաւ բեր ես. վասն զի այդ բերանը բանեցընողները խօսիլ կուզեն, լսել չեն ուզեր : Բայց իհարկէ կհասկընաս որ այդ ըսողները կամ չեն գիտեր եւ կամ չեն յիշեր թէ մեր ազգը այսքան հարիւր տարիէ իմեր այդ փայլով փայլունքովն է որ անպէս ցրուեր պառակտեր խեղճըցեր է, ինչէն կըյուսացուի որ՝ նոյնպէս եւ աւելի ալ քաշըլշուելով՝ այժմ՝ ամբրնայ, զօրանայ, միաբանի : Ասոր ի՞նչ կըսես :

— Ի՞նչ ըսեմ. ատանք ո՞րքան որ իմ խելքիս բաները չեն ալ նէ, ինձի ալ կերեւի որ այն կախները ազէկ բաներ չեն : Բայց այս ալ լսեր եմ՝ որ կըսեն թէ մեկեւ եւրոպացի ազգերն ալ այսպիսի կախներով առաջ գնացեր են եղեր :

— Այդ ըսող իմաստակները նոքա են որ սովորած են գրքին մէկ երեսը միայն կարդալ. թէ որ միւս երեսն ալ կարդային, կտեսնէին որ ընդհակառակն՝ եւրոպացի ազգաց յառաջագիմութեանը մի միայն զօրաւոր շարժիչ եւ պատճառ եղած է ուսումն ու միաբանութիւնը, ինչպէս որ եւրոպացոց պատմութիւնները մտադրութեամբ կարդացողներուն յայտնի է : Ամէն անգամ՝ որ տգիտութիւնը տիրեր է նոցա մէջ, — ինչպէս հին տեսնն ու միջին դարու ժամանակները, — գժտութիւններն ու երկպառակութիւններն ալ շատցեր են, եւ այն գժտութիւններով ազգերնին կտոր կտոր բաժնուեր, տկարա-

ցեր, նուաճուեր, աղքատցեր ու սղորմելի ժողովուրդներ ձեւացեր է:

Կան յիրաւի այնպիսի առժամանակեայ կամ վայրկեանական յեղափոխութիւններ որ թմրած ազգի մը արթննալուն ու իրեն պարտքերն ու իրաւունքները ճանչնալուն պատճառ եղած են կամ կլինին. բայց նախ՝ այն յեղափոխութիւնները ստոյգ իրաւանց եւ արդարութեան վրայ հիմնեալ պիտի լինին՝ որ ամենայն խոհական եւ ճշմարտասէր անձանց եւս հաւանութիւնն ընդունին. եւ երկրորդ՝ այնչափ երկար պիտի չտեւեն որ ազգին բարոյական եւ նիւթական ոյժը քամեն ակարացիներն. ապա թէ ոչ, զարմանք չէ որ անխոհեմ կռիւներով ու երկարատեւ վէճերով ազգ մը բոլորովին ալ փճանայ, եւ իւր ազգութենէն զոտելով՝ երթայ օտար ազգաց մէջ ընկղմի, ինչպէս որ շատ սղբալի օրինակներով տեսնուած է ամէն տեղ: Անձրեւներն ու փոթորիկներն ալ իրենց մեծամեծ օգուտներն ունին. բայց երբոր ատենէ դուրս կամ խիստ երկար ատեն պատահին, ո՛չ ապաքէն մեծամեծ աւերմունքներու պատճառ կլինին: Ուսման լոյսն է միայն ազիտութեան խաւարը փարատող, եւ միաբանական ու խաղաղասէր հոգին է միայն ուսումը առաջ տանող:

— Այն իրենք զիրենք ուրիշներէն աւելի ազգասէր ըսողներուն մէկ աղաղակն ալ այդ է ահա՝ որ ուսում կուզեն, գպրատուններ բացուի կրսեն, կարգ կանոն դրուի կկանչեն. ես ալ կարծեմ թէ իրաւունք ունին: Բայց եկու տես որ տմանք՝ անոնց հակառակ՝ կարծես թէ ուսման ալ թշնամի են, կարգի կանոնի ալ, ուսման վնասը օգուտներէն շատ աւելի է՝ կրսեն, կարգ կանոն ըսածնին ալ՝ անտանձ աղատութիւն է, մեծ ու պղտիկ չըճանչնալ է, ուրիշ բան չէ՝ կաղաղակեն:

— Տարակոյս չկայ որ այդ երկու տեսակ մարդկանց մէջ՝ իրաւունքը ուսում ուզողներուն, կարգ կանոն ուզողներուն է, եւ նոցա հակառակորդները երբ եւ իցէ ամօթով պիտի մնան: Միայն թէ ցաւալին այս է որ ուսում՝ գպրատուն՝ կարգ կանոն պահանջողներուն եւս ամէնքը չեն գիտեր ու չեն հասկընար թէ ինչ է իրենց ուզածը. ինչպէս որ նոցա հակառակորդներն ալ՝ այդ բաները հարկաւոր չեն ըսելու տեսն՝ չեն կրնար հասկըցրնել թէ ինչ է իրենց գիտաւորութիւնը. վասն զի երկու կողմին ալ մեծ ու սովոր

բական պակասութիւն է՝ բաւ չգիտցած բաներուն վրայ հակառակութիւն ընել:

— Ինդրեմ, ըսէք ինձի թէ ձեր կարծեօք որ կտորն է թէ առաջիններուն եւ թէ միւսներուն չհասկըցածը:

— Իմ ըսելս ինչ հարկաւոր է. միթէ ամէն մարդ ալ չըտեսներ որ առաջիններուն շատը քանտարակոյս չեն գիտեր թէ ուսումն ինչ է, եւ ուսմանց ո՛ր տեսակը՝ ո՛ր մասը աւելի կամ պակաս հարկաւոր է այժմ՝ մեր ազգին. օրինակի համար՝ չեն գիտեր որ օտար լեզուաց գիտութիւնը աւելի հարկաւոր է թէ ընալի հայկաբանութեան տեղեկութիւնը. թուաբանութիւնը թէ բանաստեղծութիւնը. երկրաչափութիւնը թէ վաճառականութիւնը. պատմութիւնը թէ նարեկը. գծագրութիւնը թէ շարականը, եւ այլն. ուսում ուսում կրսեն կերթան, եւ աղէկ բան կրսեն. բայց ինչ օգուտ որ ինչ ըսածնին իրենք ալ չեն գիտեր. կարծեն թէ մէկը մէկը կանչելով բերանին կանուշնայ: Աղէկ ըսեր էր մէկը թէ բանական մարդիկ չեն, այլ մէկ մէկ փող (պող) են այնպիսիները, փչողին ուժին ու իրենց կոկորդին հաստութեանը համեմատ ձայն հանել միայն գիտեն: Ասոր մէկ ապացոյցն ալ այն է որ ուսումը կողմեն, իսկ ուսումնական մարդուն յարգը ամենեւին չեն ճանչնար. իրենց համար «Հասան ու բարակը մէկ գին, վնայ բարակ մանողին»: Դպրատանց բարեկարգութիւնը կուզեն, եւ այն բարեկարգութեան յորում եղածը ամենեւին չեն գիտեր. կարգ կանոն դրուի կրսեն, ու այն դրուած կարգերը պահելը կամ պահել տալը ինչով կլինի՝ երազներուն մէջ անգամ չեն տեսեր: — Դամք նոցա գէ՛մ վիճաբանողներուն:

Նոցա մէջէն ալ շատը՝ երբոր ուսումն ցարստն, կարգ կանոն հարկաւոր չե կկանչուր տեսն, ինչով կրնան արդարանալ իրենց խելքովը այսպիսի ժամանակ, եթէ ոչ ասով որ մտքերնին գրած կրեւան թէ հիմնական երիտասարդներուն առած ուսումը անպատճառ անհաւատութեան կտանի. հիմնական գպրատունները փրօթեալութիւնով սովորու տեղեր են. հիմնական կարգ կանոն կուզեմք ըսելը՝ նորեւուկ սովորութիւններ հաստատեմք ըսել ու ապստամբութիւն հանել է... ուստի եւ ասոնց գէ՛մ կենեն. այնպիսի ուսումը զեւթինն անցնի, այնպիսի դըպ-

բառունը հիմնայառակ կործանի, այնպիսի կարգ կանոն ամենեւին չգրուի՝ կիրանչեն։

— Եթէ յիրաւի այդպէս է, իմ խելքս ալ կհասնի այժմ թէ քանի որ մեր ազգին մէջ շատ գտնուին այդ երկու տեսակ մարդիկը, կարելի պիտի չլինի ըսել թէ մեր ազգը մեծ յառաջադիմութեան մեջ է, այլ թէ յառաջադիմութեան մեծ փափաք եւ սկզբնաւորութիւն մի ունի։ Բայց միթէ այս եւս գովելի բան չէ, պարոն։

— Այո, ամենայն իրօք. եւ այս ազգային յառաջադիմութեան գովելի բաղձանքին միայն գեղեցիկ նշաններ են այն ամենայն ուսումնասիրական եւ ազգասիրական շարժումներն որ կտեսնուին մեր ազգին մէջ տեղ տեղ՝ քանի մը տարիէ ի վեր. եւ ըստ ինքեան ասկից աւելի ինչ նշանակութիւն ունին այն խոշոր խոշոր խօսքերն որ ոմանց բերնին սովորական ոճերը դարձած են. իննեւսանկերնդ դարս, ազգը այսպէս կամ այնպէս կպահանջէ, ազգերնիս առաջուն ազգը չէ, ազգերնուս աչքը բացուած է, ազգերնիս օրե օր հսկայափայլ առաջ երթալու վրայ է, եւ այլն, եւ այլն, եւ այլն։

Այլ ինչ էր բոլորովին՝ թէ որ մատենագրութիւնը զգալի կերպով ծաղկէր մէջերնիս, եւ ընտիր ընտիր հեղինակներ երեւնային ուսման եւ գիտութեան զանազան ճիւղերուն մէջ. թէ որ ուսումնարանները շատնային ու մեծնային, եւ աւելի քաջակիրթ աշակերտներ հասցընէին. թէ որ լրագիր-

ները կառաջարկներ ու սերմանաբաղ թարգմանութիւններ լինէին դագրէին, ու սկսէին մէկ մէկ ազգային դոյն ունենալ. թէ որ օտար սովորութեանց եւ նորաձեւութեանց սէրը քիչ մը պակսէր մէջերնիս, ու հայկական ընտիր եւ սեպհական ախորժակ մը տիրապետէր ամէն տեղ։ Մէկ խօսքով, ազգերնիս մեծ յառաջադիմութեան մէջ է կըսէինք նաեւ մեք՝ թէ որ տեսնէինք ամէն տեղ աւելի միաբանական հոգի, աւելի բարի նախանձ իրարու վրայ, աւելի ճանաչողութիւն ճշմարիտ արդեանց, աւելի անտեսութիւն անձնական մանր պակասութեանց, աւելի պատկառանք եւ սէր առ ազգային եկեղեցին եւ դաւանանքը, աւելի ճիշդ պահպանութիւն ազգային լեզուի եւ սովորութեանց, աւելի ազատութիւն ինախապաշարմանց, աւելի զգուշաւութիւն խաղաղական կրօնամոլ հակառակութեանց, աւելի հեռաւորութիւն իցած շողորորթութենէ օտարաց, եւ ընդհանրապէս աւելի ընտրողութիւն բարւոյ եւ չարի յընթացս քաղաքական եւ ընկերական կենաց։

Ահա այսպիսի խօսակցութիւններէն մէկը լսեցինք կըսեմ այս օրերս, եւ ախորժելով մտիք բրինք. յուսամք թէ ազգասէրք եւս ախորժանօք կկարգան, եւ իրենց խոհական խորհրդածութիւնները կընեն ազատօրէն մեր այժմու ազգային յառաջադիմութեանը վրայ։

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Մ Ն Ե Ր,

Եթէ վատին միշտ ներես,

Լաւին վընաս կըբերես։

Ամենուն լեր ներողամիտ,

Բայց մի երբէք քո անձիդ։

Եթէ առջեւդ Աստուած կայ,

Ետեւէդ ո՞վ կուղէ դայ։

Ամէն մարդու բան չըտաս.

Ամէն մարդու չըհատաս,

Խենդի հեռ գործ չունենաս։

Բարեկամ եւ գիրք

Սակաւ՝ բայց ընտիրք։

Սուտ բարեկամ,

Կեղծ գըրամ։

Հարուստ քաղաք ախտալից,

Եղոտ պանիր որգնալից։

Խրատ ասողը գիտուն պիտի,

Լըսողը գիտնադոյն պիտի,

Պահողն իմաստուն պիտի։